

ՔՐԻՍՏՈՍԻԱՆ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորութիւնը բաժին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ՄԵԼԿ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

Յայտարարութիւնները ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

Մարթա Նալբանդեան-Յակոբեանցը և Աննա Նալբանդեանցը սրտի
ցաւով յայտնում են բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը որդւո, երկրորդը ամուսնու՝
Մ Ի Բ Ա Յ Է Լ Մ Ո Վ Ս Է Ս Ե Ա Ն Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ե Ա Ն Յ Ի

Յմայր, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 8-ին: Յուղարկւողութիւնը տեղի կունենայ շաբաթ,
հոկտեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 10-ին: Միջալէկեան հիւանդանոցից դէպի Կուկիայի
Թանգարանից եկեղեցին, այնտեղից Խօջիվանք:
1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անշահախիռութեան արդիւնքը. Փոքր ազգերն
էլ կարող են մեծ լինել. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Հայոց թատրոնը Բաղրուտ. Նամակ Եկատերինո-
գարից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբ-
ագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Պարլամենտի բացումից առաջ. Ա-
նտառի մէջի Զօյայի բնակարանում. Արտաքին
լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էփօսները:

ԱՆՇԱՀԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Լօրէ Սօյբերի, լրագրների ստեղծ, շու-
տով մի ձառ. կարտասանէ, որի մէջ ցոյց
կը տայ Անգլիայի անշահախիռութիւնը կը-
րեւորական հարցի մէջ: Առաջին միւնիստրը
շատ դիպլոմատների հետ արդէն խօսել է
այդ մտքով: Նա ասել է որ Անգլիան ա-
պացուցեց, թէ կամենում է միմյանի Կրե-
տէի բարօրութիւնը, իր համար որ և է
շահախիռական անկախութիւն չունի. հէնց
այդ նպատակով էլ նա վճռել է մի հատ
թիւրը գինուր չը թողնել կղզում:

Այս անգամ բրիտանական միւնիստրի խօս-
քերը դատարկ ֆրագմեր չը դուրս եկան:
Հեռագիրը լուր բերեց, որ սուլթանը ար-
դէն հրամանագրել է հեռացնել թիւրը
զօրքերը Կրետէից, որ նշանակում է, թէ
թիւրքական բռնակալութիւնն ընդմիշտ
հրաժեշտ է տալիս այն դժբախտ կղզուն,
ուր հարկւարաւոր տարիներ ընթացքում
արիւն էր թափվում: Սա մի նշանաւոր
հանգամանք է, որ ցոյց է տալիս, թէ ինչ
զեղեցիկ մեծագործութիւններ կարող է

առաջացնել եւրօպական դիպլոմատիայի
անշահախիռութիւնը: Անցեալ դարից սկը-
սած մինչև մեր օրերը արեւելեան հարցը
զբաղեցնում է եւրօպայի ամենալաւ մտա-
ծողներին. խօսել են և շարունակ խօսում
են թէ՛ քաղաքական գործիչները, որոնք մի
առանձին հակում չունեն դէպի գրքերի
մէջ փառաբանող բարոյական սկզբունքնե-
րը, թէ՛ հրապարակաստներ, փիլիսոփաներ,
բարոյագէտներ, որոնք գործ չունեն քա-
ղաքական միտումների հետ. և ամենքը
համաձայն են եղել այն կէտի մէջ, որ ա-
րեւելեան հարցը կը կորցնէ մշտական սպառ-
նալիքի, արեւնահեղ սարսափների կերպա-
րանքը, եթէ պետութիւնները, որոնց ձեռ-
քին է այդ դարաւոր կնիքը, կը գործեն
անշահախիռութեամբ, անկեղծութեամբ:
Այդ ճշմարտութիւնը այսօր հատուկում
է մի նոր փաստով, մի փաստ՝ որ շատ հա-
զուադիւտ է միջազգային համաձայնու-
թեան և միաբան գործակցութեան տա-
րեցրութիւնների մէջ:

«Մշակ» մէջ՝ դեռ այս տարվայ սկզբնե-
րին մեք, նկատի առնելով այն դիրքը, որ
բռնել էին Ռուսաստանը և նրա հետ ա-
րեւմտեան երեք մեծ պետութիւնները,
ողջունում էին կրեւական հարցի վեր-
ջաւորութիւնը: Ի՞նչ այն ժամանակ մեք
յոյս էինք յայտնում, որ չորս պետու-
թիւնների անկեղծ համաձայնութիւնը կը
տայ կղզուն այն, ինչ ցանկալի է համար-
վում լուսաւորութեան, քաղաքակրթու-
թեան և մարդասիրութեան տեսակէտից:
Այն օրվանից շատ չար ու բարի անցաւ,
խեղճ կրեւացիների զլխով, թիւրքական

անկեղծ ձգձգումները, գերմանո-աւստրիա-
կան երկդիմութիւնը խոչընդոտներ էին, ո-
րոնք կարող էին երկարացնել Կրետէի տա-
ռապանքները: Հարկաւոր էր, որ անգլիա-
կան զինուորներն էլ կոտորվէին Վանդա-
լում վայրենի բաշխօղակների ձեռքով,
հարկաւոր էր, որ այդ աղէտը ցնցէր ան-
գլիական քաղաքագէտներին և հարկադրէր
նրանց գործել եռանդով, առանց զիջում-
ների, մանաւանդ առանց որ և է շահա-
սիրութեան, այս բոլորը հարկաւոր էր,
որպէս զի կրեւական հարցը այլ ևս Գօր-
գեան հանգրջը չը համարվի և արագ կեր-
պով իր լուծումն ստանայ: Դէպքերը քա-
ղաքականութեան առաջնորդներն են. նը-
րանց հաճոյ էր, որ կրեւական ազատու-
թիւնը կնքվի անգլիացիների արիւնով: Եւ
եթէ սա արեւնահեղ դրամայի վերջին
գործողութիւնն է, մարդկութեան ամեն
մի բարեկամ պիտի շնորհաւորէ եւրօպա-
կան դիպլոմատիան, որին, վերջապէս, աշոյ-
վեց խաղաղ կերպով կարգադրել ա-
րիւնոտ հարցերից մէկը: Այդպէս էլ
հարկաւոր էր: Եթէ արեւելեան հարցը իր
ներկայ դրութեան մէջ մի մրցութիւն է
բրիտանիկութեան և իսլամի մէջ, պէտք
էր, որ բրիտանիկութիւնը, իբրև կուլտու-
րայի, քաղաքակրթութեան ներկայացուցիչ,
ցոյց տար իր ոյժը, իր գերազանցութիւնը
խալածութեան ֆանատիկոս զինուորներին:
Այնտեղ, ուր միայն ոյժն է մեծարվում
իրբև միակ հասկանալի իրաւունք, վերին
աստիճանի յուսահատական, մաւրյ դրու-
թիւն կը ստեղծվէր, եթէ քաղաքակրթու-
թիւնը հասկացվէր իբրև մի ուժաթափ,
թոյլ ու անկարող բան: Այժմեան քայլը
ցոյց է տալիս, որ այդ ցաւալի մարդու-
թիւնը մահաբերական տարրից խլվում է և
նա ալքը բաց կը տեսնէ, որ յաղթողը
քաղաքակրթութիւնն է: Իսկ դա արեւե-
լեան հարցի մէջ ճշգրիտ նշանակութիւն
ունի. դա ձխլածների համար յոյս է,
իսկ ձխլողների համար—սանձ...

ՓՈՔՐ ԱԶԳԵՐՆ ԵՎ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԵՍ ԼԻՆԵՎ

«Փոքր երկիրները իրաւունք ունեն դրաւել
անկախ տեղ կուլտուրական մեծ ազգերի շար-
քում, երբ գիտնական հետազոտութիւններն մէջ
թմնկալին դանձր են մտնում: Այս խօսքերն
արտասանեց Նորբեր մի շվեդացի գիտնական,
Ստոկհոլմում, սկանդինավեան բնագէտների ժո-

ղովում, երբ շվեդական ուսումնական աշխարհը
հանդիսաւոր կերպով տօնում էր իր մեծ որդի-
ներից մէկի՝ Նուշակաւոր քիմիկոս Իօանն Բերցե-
լիուսի յիշատակը, նրա մահվան յիսնամեակի ա-
ռիթով: Հանդէսը բացեց շվեդ-նօրվեգիական
թաղաւորը մի ձառով, որով ողջունեց ժողովը
Վիննէի և Բերցելիուսի հարեմբի մոտենով: Ող-
ջինի այդ խօսքերը գիտնական-թաղաւորի բե-
րանում նոյնքան աջող էին, որքան և ճիշդ. պե-
տութեան գլուխը յարգանք է մատուցանում
գիտութեան այն հուշակաւոր ներկայացուցիչնե-
րին, որոնց ահալին ծառայութիւնները Շվե-
դիայի ազգային պատուի համար աւելի մեծ ազ-
բիւր պէտք է կազմեն, քան Պուստաւ Ադօլֆի
և Կարլ XII-ի քաջագործութիւնները, որովհետեւ
Լիննէի նուաճումները բուսաբանութեան ասպա-
րէզում և Բերցելիուսի նուաճումները քիմիայի
ասպարէզում պատկանում են,—ինչպէս ասում
է մի գիտնական,—այն մեծ նուաճումների շար-
քին, որոնց Հօրացիօ Յուլիոս Վեսարի հերոսա-
կան յաղթութիւնները բարձր է դասում:

Յայտնի է, որ Ռօբէտլիէր մահվան պատժի
ենթարկեց Նուշակաւոր Լավուազիէն, ասելով թէ՛
այդպիսիութիւնը պէտք չունի քիմիային:
Երբ գիլտօտին կացնի հարուածի տակ ըն-
կաւ Նուշակաւոր քիմիկոսի գլուխը, շատերը
կարծում էին, թէ Լավուազիէն հետևող չի ունե-
նայ: Եւ ասան հրապարակ եկաւ երիտասարդ
Բերցելիուս, իբրև հետևող Լավուազիէն և 1803 թ.
իր արած նշանաւոր գիտերթով մեծ հուշակ ըս-
տացաւ: Դրանից յետոյ նա հրատարակեց մի
շարք յօդուածներ ֆիզիկայի, քիմիայի և հանգա-
բանութեան մասին, որոնք գրաւեցին ամբողջ
գիտնական աշխարհի ուշադրութիւնը: Բերցելիու-
սի գլխաւոր ծառայութիւնը կայանում է նրա-
նում, որ նա մեծ ճշդութեան հասցրեց վերու-
ժական քիմիան և այդ գիտութիւնն իր նշանա-
ւոր դարգաւաճումը պարտական է նրան: Նրա,
իբրև շվեդական աշխարհահռչակ գիտնականի
յիշատակի յարգելը, ազգային մեծ տօնախմբու-
թիւն էր Շվեդիայում, որովհետեւ—կրկնեմը շվե-
դական գիտնականի խօսքերը,—«միայն այնպի-
սի գիտեր, որ արեց Բերցելիուս գիտութեան
ասպարէզում, ասպիս կն փոքր երկիրներին ի-
րաւունք անկախ տեղ դրաւել մեծ կուլտուրա-
կան ազգերի շարքում»:

Այդ մեծ միջթարութիւն է փոքր ազգերի
համար և լաւ ուղեցոյց, թէ ինչպէս նրանք կա-
րող են, չը նայելով իրանց թուր բնութեան,
պատուաւոր և առաջնակարգ տեղ բռնել մեծ
ազգերի շարքում՝ անձնուրէ կերպով ծառայե-
լով գիտութեան և մարդկութեան շահերին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՊՕԻՍՏՆԵՐԸ

ԵՒ ՆՐԱՆՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(Ըստ Մանտեգացայի)

II

Հակառակ ծայրում գտնվում է թիթևամիտ
եսակները, որը օգտվում է քայլական դուրա-
նութիւններից և երբեք չի մտածում վաղվայ
մասին: Իր ժլատ եղբօր առակի փոխարէն նա
երգում է. Non pensiamo all' incerto domani.
Finchè è dato quest' aggrì goder. *) Նա պէտք
է մտածէ իր սերունդի մասին, իր աշխատանքի
մի մասը պիտի յետ գցէ իր որդեց համար, իր
ամուսնու համար, բայց նա ցնիկաբար փրկի-
փրկում է ֆրանսիական առածը. Après moi le
déluge. Նա գնահատում է միայն դուրաճութիւն-
ները և որքան կարելի է օգտվում է նրանցից,
—անհ նրա կեանքի իղէտը: Ի՞նչ բան է խօսքը,
եթէ ոչ պատարկ աղմուկ, որը հնչում է
մերթ այստեղից, մերթ այնտեղից: Ի՞նչ բաներ
են զանազան իղէտները հայրենիքի, պատուի և
հերոսութեան մասին: Տիկնիկներ, որոնցով խա-

*) Զբ պէտք է մտածել անյայտ վաղվայ մասին:
Օգտվե՛ք նրանով, ինչ որ տալիս է այսօրվան օրը:

բեական օրէնագրութիւնից... «Se froter au
gibet sans y noter» — թրեք գալ կախաղանի մօտ,
բայց նրանով չընկնել: Այս ասել է դարուս ա-
մենամեծ քաղաքական գործողներից մէկը և նա
թէն գործնական կեանքում յաճախ իրագործել
է իր ցնիկական ասացումները, այնու ամենայ-
նիւ նրան վիճակվել է ոչ թէ բանտը, այլ մի-
նիստրական պօստից և արձան:

Վայ մեզ, երբ ետականը մի կողմն է դրել
աւետարանն ու պատուի օրինադրքը, երբ նա
աչքաթող է արել այն ամենը, ինչ որ կոչվում
է կրօնական բարոյականութիւն և այլն: Վայ
մեզ, եթէ պատահե՛ք նրան մեր կեանքի ճա-
նապարհին՝ Նա աւագակի նման ատրճանակով
և խնչալով չի դիմում: Նա կրում է իր վրա
այլ դէնք, աւելի զարնուրելի դէնք, նա ոչ մի
բանի չի հաւատում և կանչ այն ամենը, ինչ որ
օրում է իրան, միայն թէ ոստիկանատուն չը
տանեն իրան, չը դատաւարտեն: Նա կարող է
բարեկամաբար սեղմել ձեր ձեռքը և գրաւել,
գայթակղեցնել ձեր կնոջը, կամ պատուազուրկ
անել ձեր աղջկան:

Եթէ նա փաստաբան է, ձեր գործը դատա-
րանում պաշտպանելիս նա կարող է համաձայ-
նութիւն կայացնել ձեր հակառակորդի հետ, որ-
պէս զի մասնակից լինի ձեր անաջողութեան ա-
ւարին և կրկնապատիկն ստանայ:

Եթէ նա խմբագիր է, միւնիստրի սեղանի վրա
կարող է մոռանալ բանկային տոմսերի մի խո-

չոր փաթեթի:
Եթէ աֆերիստ է, կը վախեցնէ իր բարեկամ-
ներին և ծանօթներին բանկի կամ երկաթուղա-
յին ընկերութեան մօտակայ անխուսափելի
սնանկութիւնով, կը գնէ նրանց բոլոր ակցիա-
ները և մի շարքովայ մէջ ձեռք կը բերի մի-
լիոններ:

Եթէ բժիշկ է, մի զոյղ ախտաբանով կամ դի-
մաճութիւնով ատելութիւն կը յայտնէ դէպի
իր ընկերակից բժիշկը, որպէս զի նրա տեղը
գրաւէ:

Եթէ գիւտեր անող է, նա իր գիւտը կը վա-
ճառէ աւելի թանկ վճարողին, եթէ երէցփոխան-
պատգամաւոր է, նա մէկ կուսակցութիւնից
կանցնէ միւսը՝ պաշտպանելով այն քաղաքակա-
նութիւնը, որը չա՛հ է բերում արդիւնաբերող-
ներին. եթէ միւնիստր է, նա խօսքով բարօրու-
թիւն կը խոստանայ ժողովրդին, իսկ գործով
կը հաճոյանայ պալատին...

Մի խօսքով՝ նա թող կը տայ այն բոլոր ա-
նարդարութիւնները, այն բոլոր ստորութիւննե-
րը, որոնց չեն կարող մեղադրել դատաւորները,
չեն կարող պատժել օրէնքները:

—Նա մեծ շառաւիղն է: Նա սատանայ է
նա նրան վաղուց գիտեմ...

Սակայն այդ անուանները մեզ չեն արգելում
նրանց բարեկամ անուանել, ընդունել մեր տա-
նը, տալ նրան մեր աղջկա՝ ձեռքը, կամ մեր
ձայնը՝ ինչի համար կուզէ լինի:

Երկ-
այլ
50
ան-
ձայ-
նը
300
դա-
արի
էր
VI
արի,
տա-
լե-
ն է
ըն-
ն
տեղ
է և
ԵՐ-
ըն
է
աւ-
IV
IV

նը (Սրա հետ ուղարկում են խմբագրության Սուբլիս արքեպիսկոպոսի նամակը, ցանկացողը կարող են ստուգել, որով սեպտեմբերի 5-ին խնդրում է չարժանակը դիմանի բարոյա-դարձիւնը, խոստանալով ինձ պաշտօն տալ սինոդում կամ տպագրւում:

Այս կարծ պատմութիւնը յետոյ, կարծեմ պարզ է, որ սեպտեմբերի 3-ին պատահած դէպ-քը, որի վրա հիմնում է սրբազանի իր արդա-րութիւնը, չէր կարող ոչ մի ժամանակ պատ-ճառ լինել իմ հերքումը գրելու, քանի որ հեր-քումը գրված է դէպքից 3 օր առաջ, այն է՝ սեպտեմբերի 1-ին: Բայց սա միայն գործի ա-տու է: Իսկական երեսն այն է, որ Սու-բլիս արքեպիսկոպոսը տեղեկանալով «Մշակին» գրած իմ հերքումի մասին, սկզբումն աշխատում էր համոզել ինձ՝ հեռագրով յետ ստանալ խմբա-գրութիւնից այդ հերքումը, իսկ վերջը մինչև անպատկառնաբար, երբ ես հաստատապէս մեր-մեջի նրա առաջարկութիւնը: Բացի դրանից, կայ և մի այլ պատճառ, որ համարում չէր տա-լիս Սուբլիս արքեպիսկոպոսին վանքապատկան Թուրքիայի այդու կապալաւորից սրբազանի ըս-տացել էր 10 ր. ջրի փող, բայց ոչ ջուրն էր տալիս և ոչ էլ փողը վերադարձնում, պատճառ-բերելով, որ 10 ր. քիչ է և որ էլի պէտք է տալ 30 րուբլի, եթէ ուզում է ջրից ապրելու: Ուստի-հատված կապալաւորն մի խնդրելով բողոքում է սինոդին սրբազանի վարձուքի դէմ: Բայց այս բողոքը, փոխանակ սինոդում ընկնելու, մի օր, դուրս է ընկնում վանական կառավարու-թեան գրասենեակում և իմ ներկայութեամբ, պատում ու վերադարձնում է խնդրողին...

Անս այն պատճառները, որ ստիպել էին Սու-բլիս արքեպիսկոպոսին, ապապա պատասխանա-տու լինելուց ապրելու: Եւ իմ վկայութիւնը ջրելու համար, ստեղծել մի դէպք, որը և աջ-դում է նրան: Հակառակ դէպքում նա ոչ մի և միջոց կունենար փաստերով ջրելու իմ հերքու-մը և ազատելու իրան ջուր վաճառելու իսկա-կան մեղադրանքից, որի դէմ սրբազանը ոչինչ չէ ասում և ընդունում է... «Մշակին» 167-րդ հա-մարում տպագրած եմ հերքումն ամբողջովին, որով հաստատում է, որ ես իրողութիւնն ու արդարութիւնն եմ պաշտպանել և ոչ թէ «վիճա-կին և տեղիս հետ փոփոխել եմ իմ կարծիքն ու ուղղութիւնը», ինչպէս աշխատում է տարածել Սուբլիս արքեպիսկոպոսը:

Եւ Զօր Զանիքէկանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Սօյալակի էժանագին ճաշարանը դադարեցրել է ճաշ տալ հայ դադ-թականներին այն պատճառով, որ Հայոց Բա-րեցորդական ընկերութեան խորհուրդը, մերժել է այս հոկտեմբեր ամսից տալ ամսական նը-պաստը Ինչու:

Մի քանի ժամանակ առաջ տեղական լրագրե-րները հաղորդեցին, որ Բազում վաճառական Արամեան և ինձին էր Թաղանտոսեան մի մեծ դուռնը են հանդանակել՝ Անդրիանում սպան-ված ռուսաց զինուորների դերեքմանի վրա ե-կեղեցի կամ մատուռ շինելու համար: Այդ լու-րը ճշդվում է այժմ «Kacm» Բազումի հաղորդած հետեւեղ տեղեկութիւններով: «Բազումի նահա-դապետ Բոգդէ ստացաւ հոկտեմբերի 4-ին հե-տեւեղ հեռագիրը Թուրքիայի ընդհանուր նա-հանդապետ Գուստովսկոյից. «Այս քաղաքի ստա-ցայ Բազումի մի հեռագիր, ստորագրված տե-ղական շատ հայերի կողմից, որոնց պարագլուխ են հանդիսանում պաշ. Մանիթալէ, Մատուրով, Արամեանց, հեռագիրը յայտնում է, որ այդ հայերը նուրբի են 10 հազար րուբլի, որով պէտք է կառուցանվի մի մատուռ կամ եկեղեցի Ան-դրիանում տպանած զինուորների եղբայրական գերեզմանի վրա: Խոր զգացված մեր զօրքի վերաբերմամբ տաճած յարգանքի այդպիսի ար-տայայտութիւնից, խնդրում եմ ձեր գերազան-ցութիւնից, հասցնելով պ. կառավարչապետի գիտութեան, յայտնել նուիրատուներին իմ և Թուրքիայի ամբողջ զօրքի կողմից ամենամա-կեղծ երախտագիտութիւն, իբրև այն անձանց, որոնք ամենից առաջ ջանք կերպով արձադանք տուին Բազմադղին թղթադրված հանդանակու-թեան»:

«Արեւելք» մէջ Այնթապի որբանոցի մասին կարդում ենք. «Մանչէստրի ազգայիններու ամ-սական 15 ոսկի նպատակին շնորհիւ, յայտնի է թէ Ազգային որբանոց մը ունենալու բարեաղ-դութիւնը կը վայելէ Այնթապ, որ իբրև կեդ-րոն մը միստիստական գործունէութեան, վա-րդուց պէտք ունէր այսպիսի հաստատութեան մը: Նախ հաճելի էր, ուսումնական այս նոր տարբերման սկիզբէն բոլոր վարժարաններու հետ որբանոցի ալ բացումը տեսնել. և թէպէտ, հակառակ հոգաբարձութեան ըրած ջանքերուն, խնդիրը պահ մը անստոյգ վիճակ ստացաւ, բայց Պատրիարքարանէ զրկուած նամակին և 60 լիբլային համակրան վրա՝ հոգաբարձութիւնը սիրտ առած՝ սկսաւ գործը փութով առաջ մղել:

Տեղադր Ամերիկեան որբանոցը հին հաստա-տութիւն մը չէ: Կը գտնուի քաղաքէս դէպի հարաւ 10 րոպէ հեռավորութեամբ Մարտին-բլիսակին վրա: Հայ և հայ բողոքական 60 երկ-սեռ ուսանող որբ ունի: Որդակի չենք գիտեր թէ ինչ է այս որբանոցին արդի կայութիւնը: միայն դո՛ւ ենք տեսնելով որ հայ փոքրիկները ամեն կիրակի առտու և իրիկուն ժամերգու-թեանց ներկայ կը գտնուին:

Այդպիսով կանոնադրապետը կամենալով ար-ժատալով անել Թիֆլիսի նահանգի մի քանի գաւառներում վերջերս յայտնված աւազակու-թիւնները և ի նկատի ունենալով, որ գաւառա-կան ոստիկանական վարչութիւնների ձեռք ա-ռած միջոցները նպատակաւորմար չեն, յանձնել է կառավարչապետի խորհրդի անդամ պ. Պրի-բիլին՝ գնալ Բորչալուի և նահանգի միւս գա-ւառները և տեղի ու տեղը քննել և ուսումնա-սիրել այն պայմանները, որոնք նպաստում են աւազակութիւնների զարգացման: Մի և նոյն ժամանակ պ. Պրիբիլին յանձնված է քննել գա-ւառական ոստիկանական և զինական հասա-րակական վարչութիւնները:

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ Լէվ Տօրոսոյ գրեթէ մի նոր բռնան. հրատարա-կիչ-գրաւաճառներից մինը գնել է այդ նոր աշ-խատութիւնը, վճարելով տուգանական թիւերին 1600 րուբլի: Հոգալուստը գրողը մտադրել է յատկացնել ամբողջ դուռնը կարօտեալների օգտին:

Այն օրից, երբ երկաթուղին հասաւ Պետ-րովի, միտք ծագեց Անդրկովկասի մրգերը եր-կաթուղու միջոցով հասցնել Պետերբուրգ և Մոսկովա ճակեւու նպատակով: Այս օրերս Պե-տերբուրգում պէտք է ընկնի մրգեր տեղափո-խելու խնդիրը և յոյս կայ, որ երկաթուղիների վաշտութիւնը էժանացնի սակագինը:

Պետերբուրգի տեղեկական ընկերութեան մէջ յարուցվել է Սև ծովի ափերին գտնվող ան-տառների կանոնաւոր և խելացի շահագործու-թեան խնդիրը: Ցանկութիւն կայ կարգել մի ընկերակցութիւն, որ իր ձեռքն առնի այդ գոր-ծը, այնպէս՝ որ թէ անտառները կանոնաւոր կերպով խնամին և թէ ձեռնառ կերպով շա-հագործվեն:

Հոկտեմբերի 7-ին, չորեքշաբթի, արժուական-թատրոնում օպերային խումբը ներկայացրեց Դարգովիսկու «Լուսավա» օպերան, որի նիւ-թը ինչպէս յայտնի է, վերջած է Պուշկինի բանաստեղծութիւնից: Նախաշարի դերը կատա-րում էր տիկին Օլգինա Այս դերասանուհին փոքր, բայց մշակված և դուրեկան ձայն ունի, նա գրաւում է մասնաւոր իր մտածված խաղով: Տէնօր Բօրիսէնկօ այդ երեկոյ տկար էր թէ իր ձայնով և թէ խաղով: Ամենից լաւ էր Տրուբին՝ շաղապալի դերում, որ համեմատաբար աշոյղ կերպով տարաւ երրորդ գործողութեան երկրորդ գերեցիկ տեսարանը: Վատ չէրդեց իր փոքր դե-րը նաև երգչուհի Սամօյլովան: Բայց ընդհան-րապէս ներկայացումը թույլ էր և ներկայ սեզո-նի անաշոյղ ներկայացումներից մէկը պէտք է համարել: Թատրոնում հասարակութիւնը քիչ կար: Լուռ էին, որ պ. Շարինա որոշել է հրախրել Թիֆլիսին լաւ ծանօթ տիկին Մարշալին և մի-նոր ֆրանսիացի տեսնոր: Այսօր կը ներկայացվին «Գիւղական պատիւ» և «Այեցանք», մասնակ-ցութեամբ իտալական լաւագոյն ոյժերի:

ԶԱՔԱՍԱՄԱՍԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 23-ից. «Անցեալ կերակի, սեպտեմբերի 20-ին քաղաքային ուսումնարանի տեսուչը ժողով էր հրաւիրել աշակերտների ծնողներին, սակայն անձերի պատճառով քչերն էին եկել. ներկայ էին և մի քանի տիկիններ: Ժողովի նպատակն էր՝ ծնողներին, կամ առհասարակ աշակերտնե-րի խնամակալներին խնդրել, որ դասերից յետոյ աշակերտներին «անտէր-անտիրական» դուրս չը-ցոյց արաւ մի քանի օր առաջ պատահած մի անախորժ դէպքի վրա, երբ «այդ թիւղաբեկ է

իր 10 տարեկան որդուն, սուր վերջին և սպա-նեկ իր ընկերոջ... Վերջում տեսուչը խօսք բա-ցեց մի քանի չքաւոր աշակերտների դու-թեան մասին և առաջարկեց հիմնել տեղական չքաւոր աշակերտներին օգնող ընկերութիւն: Ժողովականներից մի քանիսը համաձայնեցին և ստորագրեցին 12 հոգի: Այս օրերս թուղթը կը չընկնեն փողոցում ստորագրելու համար, և եթէ բաւարար թիւ ստացվի՝ կուղարկեն կառա-վարչապետին՝ հաստատելու: Հրախրում ենք մեր հասարակութեանը՝ չը խնայել իր լուծման և աջակցել այդ բարի գործին:

ԲԱՎՈՒՅՑ տեղական լրագրներին հեռագրում են որ հոկտեմբերի 6-ին, դուռն, ձայների մեծամասնութեամբ, Բազում քաղաքացու ընտ-րեց ուղարկալի անդամ Ֆոն-Նէր-Նօնուէին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԲԱՑՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Բրիտանի մինիստրութիւնը ծանր փորձանք-ներ է ենթարկվել: Դիմադիր կուսակցութիւն-ները, որոնց հետ միացաւ այս օրերս և նախկին մինիստր-նախագահ Մեյքին՝ Էյկնայում արտա-սանաւ իր ճառով (որ սխալմամբ «Մշակ» նա-խապէրին համարում վերագրած էր Հանտօյին), բոլոր իրանց ոյժերը լարում են, որպէս զի կա-րողանան պարամէնտը բացվելուն պէս տապա-լել առ մինիստրութիւնը: Պարիզի բանտրների գործադուլը, Իրէֆուսի գործի վերաքննութիւ-նը, օպիոզիցիայի բուռն յարձակումները, որոնք չեն խնայում նոյն իսկ Բրիտանի ընտանեկան կենսը և պատիւը, ընդհանուր շտաբի ցոյց տուած խուլ դիմադրութիւնը և զենեքաւորների մի մասի յայտնի դաւադրութիւնը՝ պետական հա-րուած առաջ բերելու,—անս այն միջոցաւոր, որի մէջ ստիպված է դործել արմատական մի-նիստրութիւնը: Թէ դաւադրութեան վտանգը և թէ բանտրների գործադուլն ստիպեց Բրիտանի մինիստրութեան մօտ 25,000 զօրք կենտրոնա-ցնել Պարիզում, այդպիսի հանգամանքներում մինիստրութիւնը չէ կարող իրան հանգիստ զգալ, որովհետև ամեն քաղքի և բանտր-ների մէջ կարող են արվանհեղ ընդհարումներ առաջ գալ:

Տարակցաւ չը կայ, որ մինիստրութեան վիճա-կը ծանրացել է զլիսաւորապէս զօրքի ցոյց տուած խուլ դիմադրութեան պատճառով: Բացի դրանից Բրիտանի մինիստրութիւնը ունի իր մէջ դաւաճան անդամներ, որոնք ոյժ և նեղուկ են տալիս զինուորականներին: Այս օրերս Մանի-մէջ կայացաւ մի բանկէտ, ուղղված Բրիտանի դէմ, որին ներկայ էր նրա մինիստրութեան մի անդամը և այդ անդամի ներկայութեամբ բանկէտը ցնծութեան արագակներով փառաբա-նեց ու օվաքիաներ արեց Մերսիէ և Վալենսակ զենեքաւորներին, որոնց մասին յաճառ լուրեր են պտրտում, թէ դաւադրութեան պարագլուխներն են: Դրանց հետ միացած է և զենեքաւ Բուա-դէֆրը. ուրեմն հրապարակի վրա, մինիստրու-թեան դէմ գործում են այն զենեքաւորները, ո-րոնք ամեն կերպ աշխատում են թող չը տալ Իրէֆուսի գործի վերաքննութիւնը և պատ-րաստ են նոյն իսկ տապալել հանրապետական կառավարութիւնը: Այդ զենեքաւորներին օգնում է և «հայրենասէրների դաճակցութիւնը», որը այժմ աւելի մի հակահանրապետական հաստատու-թիւն է, որ կոչումն է անում, ոճրագործութիւն, դաւադրութիւններ է սարքում հանրապետու-թեան դէմ և քաղաքացիական պատերազմ է կազմակերպում: Միւս կողմից «Aurore» լրա-գիրը հաղորդում է. «Վալենսակ մտադրել էր կալանաւորել բոլոր այն անձանց, որոնք պա-հանջում են Իրէֆուսի գործի վերաքննու-թիւնը, ենթարկել նրանց սենատի դատաս-տանին և աքսորել: Նա իր ծրարիւրը բա-ցատել է նոյն իսկ մինիստրների խորհրդում: այժմ նա ուրիշ բանի է ձեռնարկել: Զինուորա-կան կղերական կուսակցութիւնը զգալով, որ ինքը կորչելու է, եթէ դէպքերը կանոնաւոր կերպով ընկնան, մտադրել է դիմել ոյժի, սարսափի և սպանութեան: Նա կայացրել է ար-դէն որոշումներ. երկու անգամ փորձեց սպանել Պիկարին, Հանրիի ձեռքում դրեցին ամբիւն, ուս-տի մեր պարտքն է ապացուցանել քաղաքակիրթ աշխարհին, թէ ում ձեռքը կարող է ընկնել վա-ղը Պրանսիան—կեղծողներ, դաւաճաններ, մարդապաշտների հանդիսատես լինի: Պրան-սիայի ճակատագիրը այժմ Բրիտանի ձեռքումն է, բայց նա ինքը չը կապաւորված է դաւաճանե-րով: Նրա մինիստրները—Շանուան, Սարրիէն և Լօկրուա դաւաճանում են նրան կաբինէտի խորհրդում, իսկ ոստիկանութիւնը—փողոցում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական լրագրները հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը ուղարկեց Վիլհելմին իր ան-հուն մի ինքնագիր նամակ, որի մէջ սրտանց ցանկութիւն է յայտնում տեսնել երկու ազգերը բարեկամութեան ամենասուր կապերով միա-ցած: Կայսրը աւելացնում է, որ մտադրել է ա-նել այն ամենը, ինչ կախված է իրանից՝ այդ նպատակին հասնելու համար: Ապա կայսրը յայտնում է թագուհուն իր առաջիկայ ճանա-պարհորդութիւնը դէպի Պալեստին և ասում է որ Սուրբ տեղերը նա կայցել է խաղաղութեան և դէպի ամբողջ մարդկութիւնը բարեկամութեան դադախարներով լցված:

—Պետութիւնները համաձայնութիւն են կա-ացրել մի կոնֆերանսիա կազմելու, որ պիտի միջոցներ մշակէ անարխիստների դէմ: Արդէն առաջարկված է, որ արգելվեն բոլոր անարխիս-տական լրագրները, օտարերկրացի անախ-րիստները հեռագրին և անարխիստները գործող-կրճատած ձեռք ընդվեն դատարաններում: «Memorial diplomatique» լրագիրը հաղորդում է, թէ Թուրքիան այդ կոնֆերանսիայում պիտի պնդէ, որ անարխիստների թիւում դասվեն նաև հայերն ու երիտասարդ թուրքերը, որովհետև դրանք

Հասել է վերջին, վճռական ժամը և Բրիտան պարտաւոր է գործել արագ ու եռանդուն կերպով:

Բրիտանի ձեռք առած խիստ միջոցները, յոյս կայ, որ խեղդեն դաւադրութիւնը իր տաղմի մէջ և նա կարողանայ մինչև վերջը տանել իր սկը-սած գործը: Ճիշդ է, պարլամենտում նրա դէմ կը լինեն և «Մեյքին» կուսակիցները, բայց դե-ժուար թէ պարլամենտը կարողանայ զիմարել Իրէֆուսի գործի վերաքննութեան, քանի որ ամբողջ երկիրն է պահանջում այդ:

ԱՃՈՒԴԻ ԷՄԻԼ ԶՈԼԱՅԻ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Պարիզի զինուորական չըջանները և նրանց երկրպագուները մի նոր պարտութիւն էլ կրե-ցին: Էմիլ Զօլան, ինչպէս յայտնի է, իր պատ-մական նամակում մեղադրել էր նաև այն էքս-պերաներին, որոնց վկայութիւնները այնքան վճռական նշանակութիւն ունեցան Էտերնա-զիի գործում: Այդ մարդիկ դառ բացին Զօլայի դէմ և պահանջեցին իրանց վնասները—30,000 ֆրանկ: Դատարանը յարգեց նրանց պահանջը: Եւ ահա, ժամանակը լրանալուն պէս, հոգալա-ւոր վկայագրողի թշնամիները, օգուտ քաղելով նրա բացակայութիւնից, շտապեցին մի առան-ձին հաճութեամբ վերգրել նրա տոյային իրերը և աճուրդի հանել, թէ Զօլայի բարեկամները մէկը առաջարկում էր տալ պահանջված գու-մարը: Պէտք էր խայտառակել Զօլային գրեթէ նրանով, որ չնչին գներով կը ծախվէին նրա բնակարանի թանկագին իրերը, և այդ հաճու-թիւնից չուղեցին զրկվել այն մարդիկ, որոնք փողոցներում «մահ Զօլային» էին կանչում: Եւ իրաւ, յայտնի նկարները գործերը գնահատ-ված էին 120 ֆրանկ, մի հին դամբարան, որի համար ամեն մի մուգէտն հազարներ կը տար, գնահատված էր 50 ֆրանկ և այն:

Սեպտեմբերի 29-ին մեծ բազմութիւն էր հա-ւաքվել «Պարիզի» հեղինակի տան առաջ: Տիկին Զօլային միթիսարելու համար եկել էին նրա ամուսնու շատ բարեկամները: «Տիկին Զօլա» ասում է մի ուսու թղթակից—թէ և յուզված էր, բայց պահպանում էր հոգու արիւթիւն և չնորհալարելու էր յայտնում իր բարեկամնե-րին: Եւստով դուրս հանեցին տոյային իրերը: Բարեկամները չըջապատեցին նրանց ամեն կող-մից, այնպէս որ ամբողջ չէր կարող մօտեւալ նրանց: Սպասում են սրտատրոփ: Դատաստա-նական պրիստաւը ամենից առաջ աճուրդի է հանում Զօլայի գրասեղանը, որ գնահատված է 120 ֆրանկ: Հէնց որ յայտարարվեց դիմը, հրա-տարակիչ ժառկիչ Զօլայի բարեկամը, կանչեց. «32,000 ֆրանկ»: Ամբողջ խուլ աղմուկ հա-նեց, նրա առաջ կանգնած էին մի քանի մար-դիկ, որոնք կամենում էին ցոյց անել Զօլայի դէմ, լսելով թէ ինչ գումար առաջարկվեց: Նը-րանք տեսան, որ ցոյցի տեղ չը մնաց, իրանց սիրտը հովաքնելու համար միայն պահանջեցին, որ սեղանը ցոյց տան: Բարձրացրին սեղանը, նոյն աղմուկը տարածվեց, բայց ոչ որ բան չա-ւելայրեց: Պրիստաւը վերջացրած հրատարակեց աճուրդը. օտար մարդիկ իսկոյն հեռացան, դուռները փակվեցան և այդպիսով աճուրդը նոր ամօթ և խայտառակութիւն դարձաւ: Զօլայի թշնամիների համար: Այդ ամօթը պատրաստե-ցին հոգալաւոր վկայագրողը բարեկամները, ո-րոնք ցոյց տուին, թէ որքան գիտեն պատուել Պրանսիայի առաջին հեղինակին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական լրագրները հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը ուղարկեց Վիլհելմին իր ան-հուն մի ինքնագիր նամակ, որի մէջ սրտանց ցանկութիւն է յայտնում տեսնել երկու ազգերը բարեկամութեան ամենասուր կապերով միա-ցած: Կայսրը աւելացնում է, որ մտադրել է ա-նել այն ամենը, ինչ կախված է իրանից՝ այդ նպատակին հասնելու համար: Ապա կայսրը յայտնում է թագուհուն իր առաջիկայ ճանա-պարհորդութիւնը դէպի Պալեստին և ասում է որ Սուրբ տեղերը նա կայցել է խաղաղութեան և դէպի ամբողջ մարդկութիւնը բարեկամութեան դադախարներով լցված:

—Պետութիւնները համաձայնութիւն են կա-ացրել մի կոնֆերանսիա կազմելու, որ պիտի միջոցներ մշակէ անարխիստների դէմ: Արդէն առաջարկված է, որ արգելվեն բոլոր անարխիս-տական լրագրները, օտարերկրացի անախ-րիստները հեռագրին և անարխիստները գործող-կրճատած ձեռք ընդվեն դատարաններում: «Memorial diplomatique» լրագիրը հաղորդում է, թէ Թուրքիան այդ կոնֆերանսիայում պիտի պնդէ, որ անարխիստների թիւում դասվեն նաև հայերն ու երիտասարդ թուրքերը, որովհետև դրանք

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13